‘‘Եւ նոքա բաղում ինչս խոստացան տալ նմա, թէ ուրանայ զՔրիստոս և շատ ջանացին ողոքանօք, և դարձեալ ըստանալեօք ահացուցանել զնա, և ոչ կարացին խախտել ի հաւատոց Քրիստոսի, զի հաստատեալ էր հիմն ի վերայ վիմին։

‘‘Եւ ապա հատեալ ի վերայ նորա վճիռ մահուան։

‘‘Իսկ նա զգեցեալ էր զՀոգին սուրբ և լի էր շնորհօք և զօրութեամբ և հաւատով, ոչ երկնչէր ի չանցն, որ պատառէին զնա, և ոչ վախէր ի գայլոցն, որք ծարաւէին արեան նորա. եկեալ Աստուածային շնորհացն իջեալ ի վերայ նորա, լուսափայլէր իբրեւ զհրեշտակի պատկեր նորա։ Զօրութիւնն Քրիստոսի բնակեալ էր ի նմա, և նովաւ պայծառանայր ի մէջ սպանողացն, տեսիլ նորա, որպէս զտեսիլ Ստեփաննոսի Նախասարկաւագին Քրիստոսի։

‘‘Ոչ երկնչէր ամենեւին ի մահուանէ, և վկայէր Լուսափայլութիւն երեսացն, լի էր Հոգւով սրբով, և արժան էր վկայ լինել որդւոյն Աստուծոյ՝ իբրեւ զՊօղոսն։

‘‘Դարձեալ զօրացաւ վկայն Քրիստոսի ի մէջ անօրինացն, և ասաց առ Դատաւորն, խնդիր մի ունիմ ի քէն, եթէ կատարես, ինձ մեծ երախտաւոր լինիս, և այս է իմ խնդիրն, որ զիս հրով այրես ի նշանակ սիրոյ իմոյ առ Քրիստոս, զի վառեալ եմ ի սէրն Քրիստոսի։

‘‘Յայնժամ մի ոմն անհաւատիցն եհար ուժգին հաստ բրբով ի գլուխ սրբոյն, մինչեւ ուղեղն արիւնախառն յերեսն ի վայր թափեցաւ, բայց նա զոհանայր զԱստուծոյ, որ հասոյց զինքն մարտիրոսական Նահատակութեան։ Յայնժամ զրոհ տուեալ բազմութեան ամբոխին՝ քարկոծ արարին զնա, և ապա զմարմինն հրով այրեցին, և ի գիշերին այնմիկ լոյս պայծառ ծագեաց ի տեղի կատարման սրբոյն ի վերայ այրեցեալ մարմնոյն, զոր ակնեբեւ տեսին ամեն այլազգիքն։ Կատարեցաւ սուրբն Սահակ յապրիլի ԺԸ. ի թուականիս ՌՃ և ԿԶ (յամի Տեառն ՊԿԶ. 1417.) և է բարեխօս վասն կարդացողաց վկայութեանս և լսողաց. ամէն”։